

ՀԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐՐԱՅՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Հայ քերականագիտությունը դերբայը գնահատելու գնահատում է որպես բայի արտահայտության երկու ձևերից մեկը, որը հակադրվում է եղանակային ձևերին: Բայի արտահայտության այս ձևերն ունեն այլ անվանումներ ևս՝ բայի անդեմ ձևեր ու դիմավոր ձևեր: Քանի որ «դերբայ» անվանումը ինքնին ոչինչ չի ասում, և դերբայների իմաստային հատկանիշների մասին կարելի է անվերջ վիճել, ուստի, դերբայի իմաստային գնահատության հարցը օրակարգից չհանելով հանդերձ, մենք նպատակահարմար ենք համարում բայի ընդհանուր բաժանման համար գործածել անդեմ ձև և դիմավոր ձև անվանումները: Այս տերմինները բայի արտահայտության երկու ձևերի յուրահատկությունները նշում են թե՛ ձևային հատկանշով, թե՛ քերականական արժեքով, որոնցով և ստեղծվում է քերականական որոշակի հակադրություն նշված ձևերի միջև:

Ուրեմն, դերբայը պետք է գնահատել որպես բայի անդեմ ձև: Սա նշանակում է, որ դերբայը պետք է լինի, նախ, բայի ձև, երկրորդ՝ անդեմ: Բայի ձև ասելով՝ բնականաբար պետք է հասկանալ բալ բառովթի ձև: Դերբայների մի մասը, իրոք, բայի, որպես բառական միավորի, ձև է, ինչպես՝ զնալ, զնացող: Դա երևում է թե՛ նրանց ընդհանուր արժեքից և թե՛ առանձին կիրառություններից: Օրինակ՝ նրանց զնալը հետաձգվեց: Մենք տեսանք ճամբար զնացող երեխաներին: Ինչպես երևում է, զնալ և զնացող ձևերը բառական լիարժեք միավորներ են: Սակայն որպես դերբայ ճանաչված լեզվական միավորների մի մասը բայի ձև չէ, ալսինքն բառ բառովթի ձև չէ, բառական արժեքը չունի: Դրանք այն դերբայներն են, որոնք հանդես են գալիս միայն դիմավոր ձևերի կազմության մեջ: Այդպիսիք են անկատար, վաղակատար, ապառնի, ժխտման դերբայները: Մեր կարծիքով, չի կարելի զնում, զնացել, զնալու (զնալու է՝ կառուցվածքի մեջ), զնա (չեմ զնա կառուցվածքի մեջ) միավորները դնել զնալ, զնացող, զնացած, զնալիս ձևերի մոտ և դիտել նույն մակարդակում, որպես նույն կարգի երևույթներ: Դրանք էապես տարբեր միավորներ են, որ չափով առաջինները բառեր չեն, իսկ երկրորդները բառեր են:

Գնում, զնացել և նման միավորները զնալ, զնացող ձևերի հետ միասին բայի անդեմ ձև համարելու գործում թյուրիմացության տեղիք տվողը, ըստ երևույթին, եղել է դրանց, իրոք, դեմք շունենալը: Սակայն դա բնավ զնում, զնացել և նման միավորները բայի անդեմ ձև համարելու ապացույց չէ, քանի որ դրանք բայ բառովթի ձև չեն: Իսկ եթե լեզվական տվյալ միավորը բայի ձև չէ, ապա ինքնին վերանում է նրանում դեմք որոնելու հնարավորությունը: Հայտնի ճշմարտություն է, որ եթե որևէ հատկանիշ լեզվական որևէ միավորի մեջ չկա այն պատճառով, որ այնտեղ առհասարակ սպասելի չէ, այդ դեպքում լեզվական միավորը չի կարելի բնորոշել տվյալ հատկանշի բացակայությամբ:

Այսպիսով, չնայած քննարկվող լեզվական միավորները դեմք չունեն.

աշնուամենայնիվ զրանք չի կարելի համարել բաշի անդեմ ձևեր, քանի որ դեմք լուենեալը ոչ թէ նրանց կարծեցյալ բայածն լինելու հատկանիշ է, այլ բայածն չլինելու փաստից, իրողութիւնից ուղղակիորեն բխող հետեանք։

Այդ զերբայների յուրահատկութիւնը ավելի որոշակիորեն պատկերացնելու համար վերցնենք նույն զնալ բաշի ձևարանական հնարավոր արտահայտութիւնները կամ ձևերը։ Այդպիսիք են՝ զնալ, զնացի, զնացող, զնացել եմ, զնում եմ, զնացած, զնա , զնալիս, զնալու եմ, չեմ զնա, զնամ և այլն։

Բերված օրինակներից յուրաքանչյուրը միևնույն բառույթի ձևարանական արտահայտութիւն մեկ ձև է, ձևարանական մեկ ինքնուրույն միավոր։ Այս բոլոր ձևերը, բայտ արտահայտութիւն եղանակի, կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) զնալ, զնացող, զնացած, զնալիս և բ) զնացի, զնացել եմ, զնում եմ, զնա՝, զնալու եմ, չեմ զնա, զնամ։ Ա խմբում ունենք բաշի անդեմ ձևեր (դերբայներ), Բ խմբում՝ բաշի դիմավոր (եղանակային) ձևեր։ Սա է բաշի արտահայտութիւն երկու ձևերի՝ անդեմ և դիմավոր ձևերի, իրական հակադրութիւնը բուն լեզվում։

Բ խմբի բայածները բայտ կադմութիւն կարելի է բաժանել երկու ենթախմբի՝ ա) զնացի, զնա , զնամ և բ) զնացել եմ, զնում եմ, զնալու եմ, չեմ զնա։ Այս երկու խմբերի տարբերութիւնն այն է, որ առաջինում դիմավոր ձևերը համադրական կադմութիւնը են արտահայտված, երկրորդ խմբում վերլուծական։ Եթէ առաջին խմբում դիմային ձևը, իբրև մեկ բաղադրյալ միավոր, կազմված է զն- ու զնաց- բաղադրիչների և համապատասխան վերջավորութիւնների կցումով, ապա երկրորդ խմբում դիմային բաղադրյալ կամ վերլուծական ձևերը կազմված են զնացել, զնում, զնալու, զնա բաղադրիչների և համապատասխան օժանդակ բայերի ոչ թէ կցումով, այլ հարադրութիւնը։ Այս վերջին շորս ձևերը լեզվի մեջ ալլ արժեք չունեն, զրանք միայն հանդիսանում են եղանակային նշված ձևերի բաղադրիչներ։ Այսպիսով, եթէ զնալ, զնացող, զնացած, զնալիս միավորները բաշի աւտոսոնայտութիւն ձևեր են՝ բաշի, որպէս բառական միավորի, ձևեր (զնալ տուն, զնացող երեխա, զնացած վայր, զնալիս հանդիպել, ապա զնացել, զնալու, զնա միավորները բաշի աւտոսոնայտութիւն ձևերի (զնացել եմ, զնում եմ, զնալու եմ, չեմ զնա) բաղադրիչներ են։

Այսպիսով, բաշի անդեմ ձև և բաշի դիմավոր ձև հակադրութիւնը անվերապահորեն կարելի է ընդունել աշնայիսի ձևերի համար, ինչպիսիք են՝

կարգալ—կարդացի (կարդայի, կարդացել եմ և այլն),
կարդացող—կարդացի (կարդայի, կարդացել եմ և այլն),
կարդացած—կարդացի (կարդայի, կարդացել եմ և այլն),
կարդալիս—կարդացի (կարդայի, կարդացել եմ և այլն)։

Այստեղ մենք ունենք իրար բացառող իսկական հակադրութիւններ, միևնույն բաշի զրտւորման տարրեր ձևեր՝ անդեմ և դիմավոր։

Այլ են հետեւյալ դուգահետները.

կարդալու — կարդալու եմ,
կարդացել — կարդացել եմ,
կարդում — կարդում եմ,
կարդա — չեմ կարդա։

Այստեղ մենք ունենք ամբողջի՝ ձևարանական մեկ ամբողջական միավորի (դիմավոր բաշի), և նրա մասի՝ բաղադրիչի հարաբերութիւն մեջ գտնվող ձևեր,

որ ըստ էության տարրեր է վերը նշված հակադրությունից: Եզրակացությունը մեկ է. խոնարհման հարացույցի մեկ բայածելը (կարգում եմ) և նրա մասը կամ բաղադրիչը (կարգում) չեն կարող դիտվել որպես բայի դոսևոման տարբեր ձևեր, քանի որ ամբողջը և նրա մասը չեն կարող կանդիսանալ և համարվել միևնույն երևույթի ասրբեր արտահայտություններ:

Այսպիսով, ի հակադրություն դիմավոր ձևերի, բայի անդեմ ձևերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ կարգավ, կարգացող, կարգացած, կարգալիս դերբայները:

Ինչ վերաբերում է վերլուծական դիմավոր ձևերի կազմության մեջ հանդես եկող կարգում, կարգացել, կարգալու, կարգա տիպի բաղադրիչներին, ապա սրանք պետք է զնահատել որպես վերը նշված դիմավոր ձևերի բաղադրիչներ, որոնք բայի ինքնություն արտահայտություններ չեն:

Անհրաժեշտ ենք համարում առանձին քննել դերբայներից երկուսի (իս-ով կազմված դերբայի և հարակատարի) բերականական արժեքն ու տեղը դերբայների համակարգում:

Իս-ով կազմված դերբայը (կարգալիս, գրելիս) համարվում է անկատար դերբայի երկրորդ ձև: Պրոֆ. էդ. Աղայանը հիմնավոր կերպով ցույց է տվել, որ այն ինքնություն դերբայ է և կոչել է ժամանակային դերբայ¹, նկատի ունենալով, որ թայս դերբայը ցույց է տալիս առարկայի մի վիճակ, որի ժամանակնա (առարկան) մի այլ գործողություն է կատարում²: Այս դերբայի առանձնացման և զնահատության հարցում լիովին համաձայն լինելով էդ. Աղայանի հետ, գտնում ենք, որ այն «ժամանակային» անվանելը հարմար չէ: Դերբայական ձևը, մանավանդ անկախ դերբայը, ժամանակային անվանումով բնորոշելը հարմար չէ, քանի որ ժամանակային որակումը թյուրիմացաբար կարող է կարծվել որպես դերբայի իմաստային հատկանիշ, մինչդեռ դերբայը ինքնին վերցրած ժամանակի իմաստ չունի: Ըստ էության այդ անվանման մեջ դեր է կատարում շարահյուսական կողմը, այսինքն այն, որ իս-ով կազմված դերբայը մի այլ գործողության կատարման համար որպես ժամանակ է դիտակցրվում: Բայց սա երևույթի շարահյուսական կողմին է վերաբերում, և հարմար չէ ձևաբանական միավորը շարահյուսական հատկանշով անվանելը: Քանի որ այդ դերբայը ցույց է տալիս մի գործողության զուգահեռ, հաբակից գործողություն, ուստի նպատակահարմար է այն անվանել հաբակցական դերբայ, որով ցույց է տրվում, որ այն արտահայտում է բերականորեն հարակից գործողություն: Օրինակ՝ Իրենց լեռները ճիշելիս նա թախծում է, կարգալիս նա միշտ նշումներ է անում:

Հարակցական դերբայը իր և՛ ձևային, և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական հատկանիշներով էապես տարբերվում է անկատարից: Նա անկախ դերբայ է, այսինքն ինքնություն արժեք ունեցող բառածե է, որ չի մասնակցում բայի դիմավոր ձևերի (զլխավոր ժամանակների) կազմությանը, ի տարբերություն անկատար դերբայի, որը միայն դիմավոր ձևերի կազմության մեջ է հանդես գալիս: Նթե անկատար դերբայը ցույց է տալիս բնթացքի մեջ գործողություն, որը սովորաբար մասնավորվում է խոսելու պահի (գրում է, խոսում է) կամ անցյալի նկատմամբ (գրում էր, խոսում էր), ապա հարակցական

1 է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967, էջ 357—359:

2 Նույն տեղում, էջ 357:

ղերբայր ցույց է տալիս որևէ գործողության հարակից, ղուգահեռ կատարվող գործողություն, որի համեմատությամբ վերցվում է գլխավոր գործողությունը: Այս բացատրությունից պարզ է դառնում, որ հարակցական ղերբայր գործածվում է մի այլ բայի, սովորաբար ղիմավոր բայի հետ միասին: Օրինակ՝ նա հուզվում է հայրենիքի մասին խոսելիս:

Այս նախադասության մեջ քերականորեն գլխավոր գործողությունն է՝ հուզվում է, իսկ խոսելիս ղերբայր ցույց է տալիս գլխավորին հարակից գործողություն, որը քերականորեն ստորադասական, լրացական հարաբերության մեջ է գտնվում նրա նկատմամբ:

Հարակցական ղերբայր չի կապվում հատկապես որևէ ժամանակի հետ. այն կարող է հանդես գալ տարբեր ժամանակներում կատարվող գործողությունների, բայի տարբեր ժամանակային ձևերի հետ, իբրև նրանց հարակից գործողություն: Օրինակ՝

	ալցելել է մեղ:
	ալցելեց մեղ:
	ալցելում էր մեղ:
	ալցելում է մեղ:
Վերադառնալիս	ալցելելու է մեղ:
	կալցելի մեղ:
	պիտի ալցելի մեղ:
	պիտի ալցելեր մեղ:
	թող ալցելի մեղ:

Այս համեմատության մեջ ուշագրավ է ոչ միայն հարակցական ղերբայր գործածությունը տարբեր ժամանակների հետ. կարևոր է նաև այն, որ խոսելու պահին կատարվող գործողություն ցույց տալու նրա հնարավորությունը շատ սահմանափակ է: Ի տարբերություն մյուս ձևերի, «Վերադառնալիս ալցելում է մեղ» նախադասությունը շատ սահմանափակ կիրառություն ունի. այն չի կարող գործածվել բուն ներկայի համար, այլ ունի միայն ընդհանուր ներկայի իմաստ. այսինքն՝ ցույց է տալիս առհասարակ կատարվող գործողություն: Հետաքրքրական է, որ այդ սահմանափակությունը մի քիչ պակաս չափով հատուկ է նաև հարակցական ղերբայր գործածությանը անցյալի անկատար ժամանակի հետ:

Այժմ՝ հարակատար ղերբայր քերականական արժեքի մասին:

Ինչպես երևում է, հարակատար ղերբայր Ա խմբի, այսինքն բուն ղերբայրների շարքն ենք դասել և ոչ թե կախյալ, ղիմային ձևերի կազմությանը մասնակցող ղերբայրների շարքի: Բանն այն է, որ հարակատար ղերբայր քերականական արժեքի ղնահատությունը վերջին շրջանում վերանայվել է մասնագիտական դրականության մեջ. ցույց է տրվել, որ հարակատար ղերբայր չի մասնակցում ղիմավոր ձևերի կազմությանը և որ այդ ղերբայր ու ԵՎ-ի կապակցությունը ոչ թե ժամանակային ձև է կազմում, այլ բաղադրյալ սառորոգյալ՝ Պրոֆ. էդ. Աղայանը դա հիմնավորել է հարակատար ղերբայրի ձևաբանական ու իմաստային տարբեր կարգի փաստարկներով: Մենք կարող ենք ավելացնել հետևյալ փաստարկը ևս: Հարակատար ղերբայր և ԵՎ-ի կապակց-

ցությունը գերականացույն արտահայտում է ներկա ժամանակին վերաբերող վիճակ: Մինչդեռ հայերենի ավելի վաղ շրջանում այն ավելի անցյալ ժամանակ էր ցույց տալիս: Ժամանակային ձևերի իմաստային շրջումը սովորաբար կատարվում է լեզվի որակական անդման շրջանում: Հարակատար գերբայի և նրանով կազմված կապակցությունների իմաստի մեջ կատարված այդ փոփոխությունը ցույց է տալիս, որ նրա ու եմ-ի միացությունը, իրոք, ձևոք է բերել գերականացույն բաղադրյալ ստորոգյալի արժեք, իսկ բաղադրյալ ստորոգյալին հատուկ է ներկա ժամանակը (եթե ունի եմ հանգուցը)․ ինչպես՝ դասարանը մախուր է, Արամը խելո՛ւ է, Գրիգորը հիվանդ է և այլն:

Ընդունելով, որ հարակատար գերբայը իրեն դուրս է դրել խոնարհման հարացույցից, այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ կրավորական սեռի և չեղօք սեռի որոշ բայերի հարակատար գերբայի ու եմ-ի հարադրությունը զեռուս պահպանում է իր ժամանակային իմաստը:

Արդ, ինչպե՞ս վարվել դերբայ և անդեմ ձև տերմինների հետ: Այս կապակցությամբ նշենք, որ տերմինների հարցը բնավ երկրորդական չէ, և բոլորովին պատահական չէ, որ լեզվաբանական գիտության զարգացման արդի շրջանում տերմինների հստակությունն ու որոշակիությունը իրավամբ դիտվում է որպես համապատասխան լեզվական րմբոնման հստակության պայմաններինց մեկը:

Ըստ որում պետք է տարբերել երկու կարգի տերմիններ՝ ա) տերմիններ, որոնք այժմ պայմանական անուններ են, ինչպես՝ ենթակա, ճուշդ, խոնարհում, նախադասություն և այլն, որոնց փոփոխման մասին խոսք լինել չի կարող, և բ) տերմիններ, որոնք համապատասխան երևույթի համար այժմ ունեն բնութագրող, գնահատող, բնորոշող արժեք, ինչպես՝ դեմք, քիվ, ժամանակ, պարզ, բարդ, բաղադրյալ և այլն, որոնցում մենք պայմանականություն թույլ տալ չենք կարող: Այսպիսի տերմինների ճշտման մասին խոսք կարող է լինել, եթե դրա անհրաժեշտությունը կա:

Հաշվի առնելով դերբայական կամ անդեմ ձևերի նշված յուրահատկությունները և տերմինների նկատմամբ այսպիսի տարբերակված մոտեցման հնարավորությունն ու անհրաժեշտությունը, նպատակահարմար է այդ տերմինների հետ վարվել հետևյալ կերպ: Բայի անդեմ ձև տերմինով կարող են կոչվել միայն անորոշը, ենթակայականը, հարակատարը, ժխտմանը և հարակցականը, բանի որ լեզվի մեջ այդ հատկանիշը հատուկ է միայն զրանց: Իսկ ինչպե՞ս վարվել դերբայ տերմինի հետ: Քանի որ այդ տերմինի իմաստն այժմ բմբոնելի չէ, նա երևույթը բնորոշող արժեք չունի, այլ պայմանական անվանում է, ուստի նրա զործածության հնարավորության ու սահմանների հարցը լուծելիս կարելի է թույլ տալ անհրաժեշտ պայմանականություն՝ ըստ նպատակահարմարության:

Բոլոր գերբայները կարելի է բաժանել երկու խմբի: Այն գերբայները, որոնք ամբողջական բառաձևեր են, այսինքն՝ բայի անդեմ ձևեր, կարելի է համարել բուն կամ անկախ գերբայներ, իսկ դիմալոր ձևերի կազմությանը մասնակցողները անվանել ձևակազմիչ կամ կախյալ գերբայներ: Այս զեպքում արդեն պետք է նկատի ունենալ, որ այժև անդեմ ձև և դերբայ տերմինները չեն կարող իսկական համարժեք լինել, բանի որ զրանք ծավալով իրար հավասար չեն:

Վերը շարադրվածից բխում է, որ «ղերբայ» անվան տակ ճանաչված բա-
յական միավորները բոտ քերականական բնույթի ու արժեքի երկու խմբի են
բաժանվում:

Ա. Բայի անդեմ ձևեր կամ բուն ղերբայներ, որոնք որպես բայի անդեմ
ձևեր հակադրվում են դիմավոր ձևերին իմաստային ու քերականական էական
հատկանիշներով. ձևաբանական ինքնուրույն միավոր են, այդ ինքնուրույ-
նության շնորհիվ հարաբերակից են տարբեր խոսքի մասերի, որոնց կարող են
փոխանցվել, չեն մասնակցում եղանակային ձևերի կազմությանը. դրանք են՝
անորոշ (դրել, կարգալ), հարակատար (դրած, կարդացած), ենթակայական
(դրող, կարդացող), հարակցական (դրելիս, կարդալիս):

Բ. Ձևակազմիչ կամ կախյալ ղերբայներ, որոնք բայի ինքնուրույն ձևնյ
չեն, բառույթային արժեք չունեն, այլ հանդես են գալիս որպես դիմային ձևերի
բաղադրիչ. հարաբերակից չեն որևէ խոսքի մասի և չեն կարող վերածվել
այլ խոսքի մասի: Դրանք են՝ անկատար (դրում, կարդում), վաղակատար
(դրել, կարդացել), ասլառնի (դրելու, կարդալու), ժխտման (դրի, կարդալ):
Այժմ անցնենք բայի ժամանակների բնութայանը: Այս հարցը և մասնա-
վորապես սահմանական եղանակի ժամանակների հարցը տեղիք է տվել և
ղեռ շարունակում է տեղիք տալ վեճերի: Տարակարծությունները տարբեր մո-
տեցումների հետևանք են: Ժամանակակից լեզվաբանությունը ձևաբանական
կարգերը բնեկու և զնահատելու հարցում հասել է որոշակի նվաճումների ու
դիտականորեն հիմնավորված եղրակացությունների, որոնք կասկածի ենթակա
չեն: Մենք նկատի ունենք այն ճշմարտությունը, որ ձևաբանական կառգեբյ
որոշվում են համապատասխան ձևի և իմաստի միասնությամբ, լստ որում
ձևից գնալով գեյլի իմաստը:

Ենելով այս ընդհանուր դրույթից, բայի ժամանակի բերականակաւ
կարգը պետք է որոշել բայի ժամանակային ձևի և ժամանակային իմաստի
միասնությամբ՝ ձևից գնալով գեյլի իմաստը:

Նախ՝ ժամանակային ձևերի մասին:
Սահմանական եղանակն ունի 7 ժամանակաւիին ձև, որոնցից 6-ր՝ վերլու-
ծական կազմությամբ, մեկը՝ համադրական (պարզ): Վերլուծական ժամա-
նակները կազմվում են 3 ղերբայի և 2 օժանդակ բայերի գուղորդումներով.
ամեն մի ղերբայ գուղորդվում է 2 օժանդակ բայի հետ, որ նշանակում է, թե
ամեն մի օժանդակ բայ գուղորդվում է 3 ղերբայի հետ: Այսպիսով կազմվում
է 2 եռանգամ ձևերի շարք.



Բերված ձևերի ձևային հակադրություններն ակնհայտ են և բացատրու
թյան կարիք չեն գրում: Իմաստային հակադրություն պետք է որոնել ամեն մի
եռանգամ համակարգի անդամների միջև: Իսկ դրանց միջև իմաստային տար-
բերությունները որոշակի են: Անշուշտ, իմաստով իրարից տարբեր են մի կող
մից՝ գնում եմ, գնալու եմ, գնացել եմ ձևերը, մյուս կողմից՝ գնում էի, գնալու
էի, գնացել էի ձևերը: Հարցն այն է՝ այդ ձևերի իմաստային տարբերությունը
ժամանակային է, թե՞ կերպային: Դա որոշելու համար անհրաժեշտ է ելնել
ժամանակային և կերպային իմաստի ու հակադրության դիտական հայտնի


ըմբռնումից: Ժամանակային հակադրություն ասելով պետք է հասկանալ ժամանակային նաեւբաղականություն իրար հակադրված ժամանակային ձևերի մեջ: Իսկ կերպային հակադրությունը չի ենթադրում ժամանակային հաջորդականություն: Ընդհակառակն, այն որոշվում է միևնույն ժամանակահատվածում գործողության տարբեր բնույթով:

Եւմ և էի օժանդակ բայերով կազմված եռանդամ հակադրությունների ամեն մի ժամանակային ձևի իմաստը տարբերվում է մուսից և մյուսներից ժամանակային հաջորդականության հատկանշով: Այդ հաջորդականությունը կամ այդ հակադրությունը ինքնին թելադրված է և պայմանավորված նրանց կազմությունով: Տարբեր բնույթի ընդհանուր ժամանակային վիճակ արտահայտող դերաչեները դուգորդվելով միևնույն մեկ՝ խոսելու պահը նշող եւմ օժանդակ բայի հետ, արտահայտում են ժամանակային տարբեր իմաստներ՝ ներկա ժամանակակետի համեմատությամբ. գնում եւմ, գնալու եւմ, գնացել եւմ: Տարբեր բնույթի ընդհանուր ժամանակային վիճակ արտահայտող այդ նույն դերաչեները դուգորդվելով մյուս՝ էի օժանդակ բայի հետ, արտահայտում են ժամանակային տարբեր իմաստներ՝ մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ՝ գնում էի, գնալու էի, գնացել էի:

Քանի որ այս երեք ձևերի արտահայտած գործողությունների ժամանակները չեն համընկնում իրար, այլ իրար հաջորդում են կամ նախորդում, նշանակում է դրանց միջև եղած իմաստային հակադրությունը, նույնպես ժամանակային է և ոչ թե կերպային:

Ի՞նչ հարաբերության մեջ են այդ երկու եռանդամ ժամանակային շարքերը: Թեև դրանցից ամեն մեկը իր մեջ մի փակ համակարգ է հանդիսանում բայց դրանց միջև կա որոշակի հարաբերություն, և դա արտահայտվում է ժամանակների որոշման երկու կետերի համեմատությամբ՝ էի և եւմ օժանդակ բայերի հարաբերությամբ, այսինքն նրանով, որ էի-ն անցյալ է ցույց տալիս և հակադրվում է եւմ-ին:

Այդ երկու եռանդամ համակարգերի հարաբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով.



Այստեղ մենք ունենք ոչ միայն երկու եռանդամ համակարգերի որոշակի հարաբերություն, այլև նրանց համապատասխան անդամների հարաբերություն: Այսպես, ա1-ը հարաբերում է ա-ին այնպես, ինչպես բ1-ը՝ բ-ին, ինչպես գ1-ը՝ գ-ին:

Եթե բերականական տվյալ համակարգը իր մեջ պետք է արտացոլի նրա անդամների՝ բուն լեզվի մեջ ունեցած ձևաիմաստային հակադրություններն ու ընդհանրությունները, ապա հիշյալ համակարգը, կարծում ենք, առավելագույն չափով է իր մեջ արտացոլում բննաբոլոր ժամանակների իրական հարաբերություններն ու հակադրությունները: Վերը բերված երկու եռանդամ հա-

մակարդերը ենթադրեցանակ հակադրություն են ներկայացնում թե՛ իրենց մեջ և թե՛ միմյանց նկատմամբ:

Առաջնորդվելով ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված մոտեցումով, եմ շարքի ժամանակները կարելի է համարել բացառապես ժամանակներ, իսկ է՛ի շարքի ժամանակները՝ հաբարեական ժամանակներ: Սակայն այս բացառապես և հաբարեական անվանումներից չսկսող է ենթադրել, թե դրանցից մեկը էական է, մյուսը՝ ոչ-էական, երկրորդական: Թրանս բոլորն էլ լիարժեք բերականական ժամանակներ են:

Սահմանական եղանակի ժամանակներից մեում է բնեկ անցյալ կատարյալի իմաստը: Այս ձևի իմաստային հատկանիշը, ժամանակային արժեքը միշտ դեահատկու համար պետք է հաշվի առնել երկու հանդամանք: Նախ, բերականական իմաստը ոչ բոլոր դեպքերում է արտահայտվում հավասար հրատարկում, ոչ միշտ է լինում հավասարաչափ ակնառու: Հաճախ է պատահում, որ բերականական հակադրությունը զմար ըմբռնելի է լինում: Սակայն ըմբռնման զմարությունը, հակադրության շրնդղմածությունը դեռևս հակադրության բացակայություն չեն նշանակում:

Վերցնենք հենց բայի եղանակային ձևերից սահմանական, հրամայական, հաբարեական եղանակների հակադրությունը: Գնում են ձևի հակադրությունը զնա ձևին շատ ակնհայտ է: Բայց զնալու եմ և պիտի զնամ ձևերի իմաստային հակադրությունը շատ նուրբ է և ավելի փոքր, քան անցյալ կատարյալ և վաղակատար ժամանակների ժամանակային տարբերությունը: Բայց դա չի խանգարում զնալու եմ և պիտի զնամ ձևերը տարբեր եղանակներ համարելուն, քանի որ մենք արժեքավորում ենք նաև վերքիկ հակադրությունները, եթե. իհարկե, դրանք արտահայտված են ձևաբանական մակարդակում:

Երկրորդ, ձևաբանական միավորի ձևաբանական իմաստը և հակադրությունը պետք է որոշել հարացուցի մեջ. քանի որ բառաձևի խոսքային շրջապատը կարող է նրան տալ այլևայլ իմաստային երանդներ և մթադնել հակադրությունը:

Անցյալ կատարյալը ժամանակային իմաստով ավելի մոտ է վաղակատար ժամանակին, ուստի անհրաժեշտ է ցույց տալ հատկապես դրանց տարբերությունը:

Անցյալ կատարյալի և վաղակատարի ձևերի միջև կա ժամանակային, մասամբ և կերպային հակադրություն: Նախ՝ ժամանակային հակադրության մասին: Այդ երկու ձևերի միջև ժամանակային հակադրությունը երևում է հարացուցային մակարդակում, ինչպես և դրան համապատասխանող խոսքային միջավայրում: Գնացել է և զնաց ձևերի հակադրության մեջ զնացը նշում է գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապես առաջ կամ մտածվելը որպես այդպիսին:

Եթե, օրինակ, ավտոկայանի աշխատակիցը, պատասխանելով ուղեորների հարցին, Ա ավտոբուսի մասին ասում է՝ զնացել է (կամ՝ ավտոբուսը զնացել է), իսկ Բ ավտոբուսի մասին ասում է՝ զնաց (կամ՝ ավտոբուսը զնաց), ապա այսպիսի պատասխանի զնացում, որպես օրինաչափություն, նշանակում է՝ Ա ավտոբուսն ավելի շուտ է մեկնել, քան Բ ավտոբուսը: Ուրեմն այստեղ ունենք ժամանակային հաբարականություն, հետևապես և բերականական ժամանակի տարբերություն: Անցյալ կատարյալի գործողությունը, ինչպես

նշել է զեռես Մ. Արեղյանը⁴, հաճախ կապվում է գործողությանն ականատես լինելու կամ նրա կատարման իրադրության մեջ լինելու հետ։ Սակայն սրանցով նշվում է երևույթի հոգեբանական-ճանաչողական կողմը։ Դա ոչ միայն չի հակասում անցյալ կատարյալ ժամանակի՝ վերը նշված գնահատականին, այլև, ընդհակառակն, պատճառաբանում է այն։ Չէ՞ որ իրականում լինել կամ իրեն պատկերացնել գործողության կատարման իրադրության մեջ, ինքին նշանակում է լինել կամ իրեն պատկերացնել գործողության կատարմանը շատ մոտ շրջանում, իսկ դա, դիտելով գործողության գիրքից, նշանակում է՝ գործողությունը կատարվել է (կամ գիտվում է, որ կատարվել է) խոսելու պահին մոտ ժամանակում։ Հմտ. նաև՝ Ժողովը վերջացավ և Ժողովը վերջացել է։ Այդ գիրքը կարդացի և Այդ գիրքը կարդացել եմ։ Արամը վերադարձավ և Արամը վերադարձել է։

Անցյալ կատարյալի ու վաղակատարի իմաստային նշված յուրահատկության ճշտության մասին է խոսում նաև ժամանակային տարրեր իմաստ ունեցող բառերի ու բառակապակցությունների կապակցելիության յուրահատկությունը։ Խոսքը վերաբերում է այն երևույթին, որ խոսելու պահին անմիջապես նախորդող կամ, համենայն դեպս, համեմատաբար մոտ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (հենց նոր, այս պահին, այս րոպեին և այլն) գործածվում են անցյալ կատարյալի հետ, իսկ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (վաղուց, շատ առաջ, առաջ և այլն)՝ վաղակատար ժամանակի հետ։ Օրինակ՝ Կիրովականի ավտոբուսը վաղուց է գնացել, իսկ Անիականինը՝ նոր գնաց։ Հենց երբ (այս րոպեին) իմացա, որ ես վաղուց է վերադարձել։

Անցյալ կատարյալի իմաստային մյուս յուրահատկությունը նրա ցույց տված գործողության կարճ տևականությունն է, ինչպես եկատել է Մ. Արեղյանը։ Այս առումով պետք է ասել, որ անցյալ կատարյալի և մյուս ժամանակների միջև կա նաև կերպային տարրերություն։

Այսպիսով, սահմանական եղանակն ունի յոթ ժամանակ, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է ժամանակային ձևի և ժամանակային իմաստի միասնությունամբ ու մյուսների նկատմամբ ունեցած հակադրությամբ։ Այդ ժամանակները կազմում են երկու հոսանքամ մեկ առանձին ժամանակի ամբողջական համակարգ, որն աչքի է ընկնում ձևի և իմաստի զարմանալի ներդաշնակությամբ ու կուռ տրամաբանությամբ։

Դպրոցական դասադրքերում ընդունված է սահմանական եղանակի ժամանակները բաշխել յոտ բնական երեք ժամանակների կամ ժամանակի երեք ընդհանուր դադափարների (ներկա, անցյալ, ապառի), որով որոշվում է, թե ժամանակի ո՞ր հատվածի համար սահմանական եղանակն է՝ նշ ժամանակներն ունի։

Բայի ժամանակների անունները ևս տարակարծությունների տեղիք են տվել։ Մ. Արեղյանը սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակներն անվանել է գերբայի և օժանդակ բայի անուններով՝ պահպանելով ժամանակային ձևի կազմության բաղադրիչների անունների հերթականությունը. այսինքն, ինչպես որ հաստատական խոնարհման դեպքում գերբայը նախորդում է օժանդակ բային, այդպիսի հերթականությամբ էլ կազմել է նրանց անունները՝ անկատար

⁴ Մ. Արեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, 1906, էջ 231։

ճերկա (*նստում եմ*), անկատար անցյալ (*նստում էի*), ապառնի ճերկա (*նստելու եմ*), ապառնի անցյալ (*նստելու էի*), վաղակատար ճերկա (*նստել եմ*) և այլն: Սրանք մինչև այժմ մնում են որպես առավել տարածված անվանումներ: Վերլուծական ժամանակների այսպիսի անունները հարմար չեն ժամանակային իմաստների արտահայտման համար: Դրանց, ինչպես որ ամեն մի բառակապակցության մեջ բնականաբար առաջին բաղադրիչն է լրացնում երկրորդին և որպես տվյալ ժամանակային ձևի հիմնական ժամանակային իմաստ արտահայտող բաղադրիչ, ըստ հայերենի շարադասական օրինաչափության, գիտակցվում է երկրորդ բառը (ճերկա, անցյալ): Ի դեպ, այդ տերմինները հենց այդ իմաստով էլ գործածել է Մ. Աբեղյանը. «Նմ բայն ունի միայն երկու ժամանակ՝ սահմանական և անցյալ,—գրում է Մ. Աբեղյանը.— ուստի և այս բայով կաղմվում են սահմանական ներկա և անցյալ բաղադրյալ ժամանակներ»: Ըստ վերը բերված անվանումների ու բացատրության՝ սահմանական եղանակի վերլուծական ժամանակները պետք է գիտակցվեն որպես ճերկայի և անցյալի տեսակներ: Բայց մի՞թե, օրինակ, նստել եմ—ը և նստում եմ—ը, որոնցից առաջինը կոչվում է անկատար ճերկա, երկրորդը՝ վաղակատար ճերկա, ներկայի տեսակներ են: Կամ, մի՞թե նստելու եմ—ը ժամանակային իմաստով ապառնի ներկա է և առհասարակ ի՞նչ է նշանակում «ապառնի ներկա»: Եթե սրանով ներկայի տեսակ պետք է նկատի ունենալ, ապա այդպիսի ներկա չկա և չի կարող լինել, իսկ եթե պետք է հասկանալ ներկայի համեմատությամբ ապառնի, որը ճիշտ կլիներ, ապա այդպես էլ պետք է ասել՝ ճերկայի ապառնի (ի տարբերություն անցյալի ապառնի), կամ պարզապես՝ ապառնի (եթե համեմատության ժամանակակետը հատուկ չի նշվում, ապա ժամանակը ներկայի համեմատությամբ է հասկացվում). նույն կերպ էլ՝ ճերկայի վաղակատար, կամ պարզապես՝ վաղակատար:

Այնպես որ բերված ձևերից միայն նստում եմ ձևն է գիտակցվում որպես ներկա, իսկ նստելու եմ—ը ապառնի է, նստել եմ—ը՝ վաղակատար՝ ներկայի համեմատությամբ: Ուրեմն օժանդակ բայն այն ժամանակակետն է ցույց տալիս, որի համեմատությամբ վերցվում են վաղակատարը, ներկան, ապառնին: Նույնը վերաբերում է նաև էի օժանդակ բայով կաղմված ժամանակների անուններին, որոնք պետք է անվանել՝ անցյալի անկատար (*գնում էի*), անցյալի վաղակատար (*գնացել էի*), անցյալի ապառնի (*գնալու էի*):

Ինչպես երևում է վերը շարադրվածից, սահմանական եղանակի դիմային ձևերի մեջ չկա կերպի համակարգ: Հիշենք, որ կերպային հակադրությունը ենթադրում է ոչ թե ժամանակային հաջորդականություն, այլ միևնույն ժամանակահատվածում կատարվող գործողության տարբեր բնույթներ, իսկ սահմանական եղանակի համապատասխան եռանդամ համակարգերի միջև հակադրությունը ժամանակային է (դիմային ձևերը գործողության հաջորդականություն են արտահայտում):

Քննարկվող ձևերի մեջ կերպի միայն մասնակի արտահայտություններ կարելի է ցույց տալ: Կերպի ռեռակի արտահայտություն կա, օրինակ, վաղակատարի և անցյալի անկատարի միջև. հմմտ. գնացել եմ և գնում էի, որոնք վերաբերում են նույն ժամանակահատվածին, բայց առաջինը կատարված գործողություն է ցույց տալիս, երկրորդը՝ կատարվող:

© Տե՛ս Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականություն, 1906, էջ 115:

Այս երևույթը, նախ, հետաքրքրական է ձևի և իմաստի տեսակետից: Ինչպե՞ս է պատահել, որ տարբեր դերբայներով և տարբեր ժանդակ բայերով կազմված այդ երկու ձևերի մեջ արտահայտվում են ժամանակային ընդհանրություն և կերպային տարբերություն: Ուշագրավ է, որ այդ ձևերից մեկը կազմված է ներկայի ժանդակ բայով և անցյալ նշանակող դերբայով (վաղակատար), իսկ մյուսը, ընդհակառակն, կազմված է անցյալի ժանդակ բայով և ներկա նշանակող դերբայով: Ահա այս պատճառով էլ ստացվել են ժամանակների համընկնում և զործողության տարբեր կերպեր:

Այնուհետև, թեև նշված հակադրության մեջ բերված ձևերի տարբերությունը հիմնականում կերպային է, սակայն դա չի նշանակում, թե այդ երկու ձևերը՝ վաղակատար և անցյալի անկատար, ժամանակակից հայերենի խոնորհման համակարգում քերականական միևնույն ժամանակի ձևեր են և առհասարակ պետք է դնահատվեն կերպային արժեքով: Բանն այն է, որ ժամանակային յուրաքանչյուր ձևի քերականական արժեքը ամենից առաջ պետք է որոշել այն համակարգի անդամների հակադրությամբ, որոնց մեջ մտնում է սովյալ ձևը: Ինչպես տեսանք վերը (էջ 30), վաղակատարը (կամ ներկայի վաղակատար) և անցյալի անկատար ժամանակները մտնում են տարբեր հոանդամ համակարգերի մեջ, ուստի դրանց ժամանակային արժեքը չի կարելի որոշել միմյանց նկատմամբ ունեցած հարաբերության մեջ. դրանցից յուրաքանչյուրի արժեքը պետք է որոշել այն հոանդամի մեջ (վերջինս մյուս երկու անդամների հակադրությամբ), որի տեղամեն է այն: Իսկ այդ հակադրության մեջ թե՛ վաղակատար և թե՛ անցյալի անկատար ժամանակները ժամանակային տարբեր հակադրություն և իմաստ ունեն (տե՛ս վերը):

Իսկ ինչպե՞ս գնահատել մյուս եղանակների ժամանակալին ձևերը: Թեև հոանձին-առանձին մենք որոշում ենք տարբեր եղանակների ժամանակների քանակը, սակայն դա չի նշանակում, թե բայի ժամանակների քանակը կարելի է որոշել դրանց զուգարով: Պետք է նկատի ունենալ, որ եթե միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերը ունեն տարբեր ժամանակային իմաստներ, հետևապես և կազմում են տարբեր ժամանակներ, ասպա տարբեր եղանակների միմյանց համապատասխանող ժամանակաձևերը, որպես կանոն, չունեն ժամանակային տարբերություն, նրանց միջև տարբերությունը եղանակային է: Այսպես, գնալու եմ, պիտի գնամ, գնամ ձևերի միջև տարբերությունը ոչ թե ժամանակային է, այլ եղանակային: Նույնը վերաբերում է գնալու էի, պիտի գնայի, գնայի ձևերին:

Կարծում ենք, որ ճշտման կարիք ունի նաև դիմավոր ձևերի ըստ կազմության գնահատությունը: Ինչպես հայտնի է, միայն խոնարհված բայով արտահայտված ժամանակային ձևերը համարվում են պարզ, իսկ ժանդակ բայով ու դերբայով արտահայտվածները՝ բազայնային: Այսպես, գնամ, կգնամ, պիտի գնամ, գնացի, մի՛ գնա և նման ձևերը համարվում են պարզ ժամանակային ձևեր, իսկ գնում եմ, գնացել եմ, գնալու եմ և նմանները՝ բազայնային:

Խոնարհված ձևերի կազմության այսպիսի գնահատությունը համոզիչ չէ: Պարզ և բազայնային անվանումներն այնպիսի տերմիններ են, որոնք միանգամայն որոշակիորեն են բնորոշում երևույթը. այնպես որ սրանց հարցում պայմանականություն թույլ տալ չի կարելի: Այսինքն՝ պարզ և բազայնային կոչվող միավորները ըստ էության պետք է լինեն պարզ և բազայնային: Այս տեսակետից մոտենալով հարցին, մենք էլ չպատճառաբանված, թե ինչու պիտի

գնում—ը պարզ է համարվում, իսկ գնում եմ—ը՝ բաղադրյալ։ Երկուսն էլ խոնարհված բայեր են. տարբերությունն այն է, որ պիտի գնամ ձեր կազմված է մի ալլ եղանակային ձևից (ըղծական՝ գնամ) և պիտի եղանակիչից, իսկ գնում եմ ձեր, որ նույնպես խոնարհված բայ է, կազմված է դերբայից և օժանդակ բայից։

Այս երևույթը, անշուշտ, կարող է արժեքավորվել։ Բայց այդ երևույթը պետք է դիտել որպես բաղադրյալ քերականական ձևի բաղադրիչի յուրահատկություն և նկատի ունենալ, որ այդ բաղադրիչի յուրահատկությունից բնավ բաղադրյալը չի դադարում բաղադրյալ լինելուց։

Ի դեպ, պրոֆ. Մ. Աբեղյանը բայի քերականական ձևերը կազմության տեսակետից ավելի ճիշտ էր գնահատել։ Նա պարզ էր համարում այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ գրեմ, գրիւ, գրեցի, իսկ բաղադրյալ՝ նրանք, որոնք «կազմվում են երկու կամ երեք բառից, որոնք իրարուց անջատ են գրվում»։ Ինչպես՝ գնում եմ, կը գնամ, պիտի գնամ, գնացած եմ եղել, գնացած պիտի լինեմ⁶։

Եթե մի կողմ թողնենք բերված օրինակների ամեն մի բաղադրիչը բառ համարելը, որի գեմ կարելի է հեշտությամբ առարկել, այնուամենայնիվ մի բան պարզ է, որ նշված բաժանումը կատարված է որոշակի սկզբունքով և ավելի տրամաբանական է, քան մեր բայական ձևերի ըստ կազմության ժամանակակից բաժանումը։ Միայն այստեղ պետք է նկատի ունենալ ենթադրության կան եղանակի կազմության յուրահատկությունը։ Մ. Աբեղյանի ժամանակ բաղաձայնով սկսվող բայերից առաջ ենթադրականի եղանակիչը առանձին գրվում, ալլպես էլ գիտակցվում էր, և դա հիմք է տվել Աբեղյանին կը գնամ ձեր համարելու բաղադրյալ, որովհետև բաղադրիչները «իրարուց անջատ են գրվում»։ Այդ ձևերի բաղադրիչներն իրենց արդի վիճակով այլևս անջատ չեն, ուստի իր իսկ Աբեղյանի չափանիշով մոտենալու դեպքում այժմ սլետք է դասվեն «սլարդ» կոչվող ձևերի շարքը։

Սակայն այս հարցը ավելի հիմնավոր լուծման կարիք ունի։ Բանն այն է, որ հայերենի բայը, ինչպես նշել է պրոֆ. Ա. Աբրահամյանը, ունի բաղադրական բնույթ. «հայերենում բայական բառույթները բաղադրված, ոչ միաձուլված ձևեր են», իրավացիորեն դրում է նա։ Իսկ բնականաբար վերաբերում է բայի թե՛ դերբայական և թե՛ դիմավոր ձևերին։ Եվ իսկապես, գրել, գրած, գրեմ, գրեցի ձևերը կազմված են մեկից ավելի ձևերից, հետևապես և պարզ չեն։ Եվ դա հասկանալի է. դիմավոր ձեր ձևաբանական միավոր է և քանի որ այն կազմված է ձևաբանական մեկից ավելի միավորից, ուստի այն պարզ լինել չի կարող։ Այսպիսով, դիմավոր ձևերը առհասարակ բաղադրյալ են, ըստ որում նրանց բաղադրիչները կարող են լինել միաձուլված և անջատ՝ կազմված վերլուծական եղանակով։ Ըստ այդմ դրանք կլինեն նախադրական և վերլուծական։

Համադրական դիմավոր ձևերն են՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալը, ըղծական ու ենթադրական եղանակների ձևերը և հրամայականի հաստատականը, ինչպես՝ կաբղացի, կաբղամ, կաբղայի, կկաբղամ, կկաբղայի, կաբղա, վերլուծական են սահմանական եղանակի մյուս ձևերը, հարկադրական եղանակի ձևերը, ենթադրականի ժխտականը և հրամայականի արգելա-

⁶ Նույն տեղում, էջ 102—103։

⁷ Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, դիրք Ա, էջ 43։

կանր, ինչպես՝ կաղում եմ, կաղացել եմ, կաղալու եմ, պիտի կաղամ, պիտի կաղայի, չեմ կաղա, չէի կաղա, մի՛ կաղա:

Ինչպես երևում է, վերլուծական դիմավոր ձևերը կարող են կաղավել ձևակազմիչ դերբայներից (ինչպես՝ կաղում եմ, կաղացել եմ և այլն) և համադրական դիմավոր ձևերից (ինչպես՝ պիտի կաղամ և այլն):

Պետք է նկատի ունենալ նաև, որ վերլուծական ձևերի կառուցվածքային նշված յուրահատկությունը մի դեպքում հանդիս է դալիս բուն դիմային հատկանշի ձևավորման մեջ (ինչպես՝ կարողում եմ, չեմ կարդա), մյուս դեպքում՝ եղանակային հատկանշի ձևավորման մեջ (ինչպես՝ պիտի կարդամ, պիտի կարդայի):

О ПРИЧАСТИЯХ И ВРЕМЕНАХ ГЛАГОЛА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. Г. АБРААМЯН

Резюме

Причастные формы в современном армянском языке квалифицируются как безличные формы глагола и противопоставляются личным формам. Исследуя с этой точки зрения причастия, мы пришли к выводу, что лишь некоторые причастия действительно являются безличными формами глагола, т. к. только они выступают как формы глагольной лексемы, как словоформы. Таковы следующие причастия: неопределенное, совершенно-результативное (*հարակալալիք*), субъективное (*կենթակալիկ*) и причастная форма на *իս*, которую мы называем сопутствующей (*հարակցական*).

Остальные причастия существенно отличаются от вышеуказанных тем, что не являются формами глагольной лексемы, лексическими единицами и лишь выступают в роли составных частей личных форм. Таковы причастия: несовершенное, давнопрошедшее, будущее, причастие отрицания. Таким образом, от исконных причастий, т. е. от безличных форм глагола нужно различать зависимые или формообразующие причастия.

Для определения времен глагола и, в частности, изъявительного наклонения мы руководствовались общим принципом определения морфологических категорий, т. е. основывались на единстве формы и содержания, идя при этом от формы к содержанию.

Изъявительное наклонение имеет 6 аналитических форм, образующихся посредством двух вспомогательных глаголов (*է*, *էր*), один из которых обозначает настоящее, другой—прошедшее время. Эти глаголы, сочетаясь с тремя причастиями, имеющими разные значения, образуют 6 временных форм, которые противопоставляются не только в плане выражения, но и в плане содержания. Одно из времен изъявительного наклонения—синтетического образования. Что касается совершенно-результативного причастия, то оно лишь в некоторых случаях образует временные формы.